կենաց խաչի մասը եւ իւր ընկերաց հետ
գալով Վաղարշապատ՝ բնակեց մի
հնձանի մէջ։

Տրդատ իմանալով Գիողղետիա-
նոսի նամակից, որ Հռիփսիմէ կոյսն՝
մերժելով նորա հետ ամուսնութիւնը
փախած է ի Հայաստան, որոնց շատ
տեղեր, եւ ապա գտաւ իւր քաղաքի
այգեստանների մի հնձանի մէջ, եւ սի-
րահարուելով նորա գեղեցկութեան՝
ցանկոցաւ ամուսնանալ նորա հետ,
բերել տուաւ իւր պալատը արքայա-
վայել շքեղութեամբ, բայց Հռիփսի-
մէ յանձն չառաւ, յաղթահարեց ըզ-
Տրդատ՝ փախաւ իւր ընկած հն-
ձանը, Տրդատի հրամանաւ նահատակ-

տեցան շահիսիմէ եւ Գայիանէ իրանց
ընկերներով 301 թ. որոց մարմինք
բացօղեայ ձգուեցան:

Տրդատ պատժուեցաւ, մոլեղ-
նեց եւ կորուսանելով բանականութիւ-
նը, խելայեղ խոզաբնակ լինելով՝ ընկաւ
շաժբերի մէջ: Տրդատի զգաստ քոյր
Խոսրովիդիտի երազներով եւ Օտայ
Նախարարի ձեռօք հանուեցաւ Գրիգոր
խորվիրապից զկնի 14 ամեայ կալա-
նաւորութեան, ուր կապրէր Աստու-
ծոյ պահպանութեամբ եւ մի բարեմէջ
այրի կնոջ կերակրելով:

* *

Ս. Գրիգոր գալով Վաղարշա-
պատ, բժշկեց իւր ընդառաջ ելած Տըր-
գատին եւ բոլոր մոլեղներաւ իշխան-
ներին, թաղել տուաւ կուօսանաց մար-
մինները, իւրաքանչիւրը ամփոփելով իւր
պատառատունը զգետտի մէջ: Երբ ինն

օր անապուկան եւ անվնաս մնացած
էին բացօթեայ:

Ս. Գրիգոր 65 օր նստելով կու-
օսանաց հնձանի մէջ, քարոզեց քրիս-
տոնէութիւնը, ապա շինել տուաւ Ս.
կուսանաց երեք վկայարան նոցա շիր-
մաց վրայ: Եւ ըստ Աստուածային
յայտնութեան ի տեսչեան տեսաւ Մե-
ածնի իջումը Հայաստանի կեդրոն վա-
ղարշապատում, պատեց իջման տեղը
եւ կանգնեց Ս. իցաջը:

Ս. Գրիգոր Տրդատի հետ շըր-
ջեց Հայաստանի ամէն կողմեր, բոլոր
Մեհեանները եւ Բագինները կործա-
նեց: Բրիստատի Ս. իցաջը նոցա տեղը
կանգնելով, որով կրկին պայծառացաւ
քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ:

Ս. Գրիգոր Հայաստանի մեծա-
բոյն մասն ի քրիստոնէութիւն դարձ-

նելուց յետոյ՝ առաջարկեց Տրդատին
եւ իշխանաց՝ որ ընտրեն մի հովիւ,
որպէս զի ձեռնադրուելով քահանայ,
մկրտէ հաւատացելոյ եւ եկեղեցւոյ
սուրբ խորհուրդները կատարէ: Տրդատ
անմիջապէս ժողով կազմեց եւ բո-
լոր նախարարաց եւ հաւատացելոց
հաւանութեամբ ընտրեց զԳրիգոր Հա-
յոց Հովուապետ: Եւ միանգամայն թա-
ղէութի եւ Բարդուղիմէոսի յաջորդ եւ
գահակաչ, եւ ապա մեծ հանդերձա-
նօք եւ փառօք ուղարկեց Կեսարիայ
քաղաք, թաղէոսի յաջորդ Ղեւոնդի-
ոս Հայրապետից քահանայական, եպիս-
կոպոսական եւ Կաթողիկոսական ձեռ-
նադրութիւն ընդունելու 302 թ:

Ղեւոնդիոս ընդունելով Տրդա-
տի առաջարկութիւնը եւ ինքն եւս
տեղեակ լինելով Գրիգորի ճգնողական
եւ առաքիւնի վարուց, հաճութեամբ
սրտի ձեռնադրեց, պարզեւեց նո-

րան Յովհաննու Մկրտչի եւ Աթանա-
զինեայ եպիսկոպոսի մատուցըր եւ վերա-
դարձոյց մեծ Հայաստան լուսաւորել,
տալով նորան օգնական Անտօն եւ
Կրօնիդէս կրօնաւորները:

Ս. Գրիգոր հասնելով Տարօնոյ
Մուշ քաղաք, մեծ դժուարութեամբ
քուրմերին յաղթեց եւ իննամիսեայ
կոչուած տեղի Գեմետրեայ եւ Գի-
ստնեայ արձանները կործանելով հիմ-
նարկեց եկեղեցի, ուր ամիսօրին
իւր հետ բերած սուրբ Կարապետի
եւ Աթանազինեայ մատուցըր, մը-
կրտեց իւր ուղեկից նախարարներ եւ
բազմաթիւ անձինք, եւ տօն հաստա-
տեց ի պատիւ նշխարաց թողուց այնտեղ
Անտօն եւ Կրօնիդէս, կարգելով նոցա
առաջնորդ իւր անդրանիկ ձեռնադր-
ած Չենոբ Գլակ եպիսկոպոսը: յորոյ
տնուն վանքը կոչուեց Գլակայ վանք,
ապա գալով Աշտիշատ հիմնադրուեց

կործանեց Վահագնի. Անահտի եւ
Աստղկան մեհեանները՝ նոցա տեղ եւս
հիմնեց Աստուծոյ երկրպագութեան
տաճար. դիմեց յԱրարատեան
աշխարհ:

* *

Տրդատ լսելով Ս. Գրիգորի վե-
րադարձը, արքայական փառօք դի-
մաւորեց նորան՝ Բագրեւանդ գաւա-
ռի Բագուան (Դիցաւան) քաղաքի մէջ
ուր Ս. Գրիգոր Եփրատ գետի մէջ մը-
կրտեց զՏրդատ՝ կոչելով Յովհաննէս,
Աշխէն Թագուհին, Խոսրովիդուխտ,
ամբողջ զօրքը եւ ահագին բազմու-
թիւն՝ օգնական ունելով եկեղեցւոյ
պաշտօնեայք, մկրտութեան ժամա-
նակ մի լուսեղէն սին իջաւ ջրոյ վե-
րայ, պատարագ մատուցանելով
հազարեաց բոլոր մկրտեալքը, ապա
Տրդատի հետ եկաւ Վաղարշապատ

քաղաք եւ հիմնարկեց Ս. Էջմիածնի
տաճարը ըստ տեսլեան իւրուսի

Ս. Գրիգոր Տրդատի հետ շրջեց
ամբողջ Հայաստան, խորտակեց կու-
տուէները, նոցա տեղ կանգնեց Գը-
րիստոսի Ս. Խաչը եւ հիմնեց եկեղե-
ցիք, բացաւ դպրոցներ, ուր Յոյն եւ
Ասորի լեզուներով սկսաւ դաստիարա-
կել բազմաթիւ մանկտիք, գլխաւորա-
պէս քուրմերի որդիք՝ քրիստոնէական
հաւատոյ մէջ եւ ամեն տեղ քրիստո-
նէութիւնը ծաղկեց, որոց համար ձեռ-
նադրեց չորս հարիւրից աւելի եպիս-
կոպոսներ, Թոճ հրեցներ եւ սարկա-
ւադներ, Սահմանեց նոցա համար ապ-
րուստ ժողովրդից, շինեց բազմաթիւ
վանքեր, կուսանոցներ, հիւրանոցներ,
կարգաւորեց տէրունական եւ սըր-
բոց տօները եւ վայելչացոյց Հայաս-
տան եկեղեցական պաշտամամբ,
Փախստական քրիստոնեայք վերա-

դարձան ի հայրենիք. սկսան համարձակ պաշտել քրիստոնէութիւնը.

Ս. Գրիգոր այսպէս Հայաստան Աստուածաշարժութեամբ լուսաւորելուց յետոյ, առանձնացու Գարանադեաց գաւառի Սեպուհ լեռան Մանեայ այրը, ուր ձգնած էր Հռիփսիմէի ընկերակից Մանէ կոյս, ուր եւ նուիրեց իւր անձը աղօթից եւ խիստ ճշգրտութեանց:

Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ

Տրդատ հաւանութեամբ նախարարաց եւ հաւատացելոց հրաւիրեց Կեսարիայից Ս. Գրիգորի Արիստակէս փոքր որդին (ոչր կրօնաշորական Կեանք կվարէր) եւ ձեռնադրել տուաւ եպիսկոպոս իւր առաքելանման Հօրից 317 թ. որպէս զի Ս. Գրիգորի քացակառութեան ժամանակ տեղապահէ նորա:

Այս միջոց 325 թ. Արիստեան ա-

ղանդը ծագեց Հռոմէական պետութեան մէջ, որոյ վասն մեծն կոստանդինոսի հրամանաւ Նիկիոյ տիեզերական ժողովը գումարեցաւ 318 հայրապետաց Ներկայութեամբ, ուր փոխանակ Ս. Գրիգորի ներկայ եղաւ Արիստակէս, որ ժողովի հանգանակմի քանի կանոններով Հայաստան բերաւ, զոր ընդունեց Ս. Գրիգոր, եւ կնքեց «իսկ մեք փառաշորեսցուք» յաւելուածով:

* *

Ս. Գրիգոր 331 թ. իսպառ հրաժարեցաւ յաշխարհէ Սեպուհ լեռան Մանեայ այրը, եւ վախճանեցաւ իւր ձգնարանում, զորոյ մարմին հովիւք գտնելով թաղեցին նոյն այրի մէջ, ապա յաջորդեց Ս Արիստակէս 332 թ. որ իւր հօր նման հոգ տանելով Եկեղեցւոյ բարիկարգութեան եւ

վայելչութեան՝ շինեց շատ եկեղեցի-
ներ եւ մենաստաններ, բայց չորրորդ
Հայոց վերակացու Արքեպոսոս իշխա-
նի վատթար գործերը անաչառ յան-
դիմանելու համար, սպանուեց քրով
Ծոփաց գաւառի մէջ, եւ իւր սարկու-
ւագաց ձեռքը թաղուեց ի Թիւնա-
ւան կամ ըստ ոմանց ի Թորքան 339
թ. եօթն տարի հայրապետական իշ-
խանութիւնը վարելուց զկնի:

Ս. ՎԻԹԱՆԷՍ

Ս. Սրիտակէսին յաջորդեց
իւր մեծ եղբայր Ս. Վրթանէս նոյն
թուին, որ նոյնպէս նախաձեռնողի
էր եկեղեցւոյ պայծառութեան եւ
բարեկարգութեան:

Ս. Վրթանէս լսելով Աղուանից
խնդիրը՝ ձեռնադրեց 340 թ. հաճու-
թեամբ Տէրատայ իւր Գրիգորիս մեծ

որդին՝ Աղուանից արքեպիսկոպոս,
յորմէ սկսաւ Աղուանից եւ վրաց
կաթուղիկոսութիւնը, բայց Աղուանից
իշխանը չկարողանալով տանել Գրիգո-
րիսի արդար կշտամբանաց ըստ դաւելոյ
Սանատրկոյ Արշակունւոյ, երկու տա-
րուց յետոյ կապեցին ձիւյ ագուց եւ
վատնեան դաշտի մէջ գետնաքարշ
առնելով նահատակեցին, որոյ մարմնը
ամիոփեցին իւր սարկաւագունը Սի-
նեաց գաւառի Ամարաս աւանի եկե-
ղեցւոյ մէջ:

Ս. Վրթանիսի հայրապետու-
թեան միջոց, Ս. Լուսաւորցի հօրա-
քեռ որդի, Ատուրեց Յակոբ Մծբնայ
հայրապետը տառապանք կրեց՝ ՌՇ-
տունեաց նախարար Մանածիհրեց
որոյ ձեռքը Աղթամարայ ծով ձգուե-
ցան նորա ութ սարկաւագունը, որոյ

Համար—Ս. Յակոբ անիճեց Մանա-
ճիհրը եւ դարձաւ իւր տեղ:

Սա ըստ խնդրոյ Ս. Վրթանիսի
գրեց հաւատոյ, աղօթից եւ սյւոց ի-
րաց վերսյ տասն եւ ութ ճառ, գե-
րազանց վարդապետութեամբ եւ ու-
ղարկեց նորան:

Ս. Վրթանէս կամենալով զերժ-
կացուցանել ազգը պարսկական հարս-
տահարութիւնից, նամակաւ դիմեց
կոստանդ կայսեր, եւ Տրդատի որդի
Խորով երկրորդին թագաւորեցոյց Հա-
յաստանի վերսյ 343 թ. նախարարաց
խորհրդով, որոյ մահից յետոյ ըստ հա-
ւանութեան նախարարաց յանձնելով
երկրի կառավարութիւնը Արշաւրայ
կամարակոնին, եւ իւր հետ առած
Խոսրովի որդի Տիրանին՝ զնաց կ. Պօլիս
կոստանդ կայսեր մօտ եւ զնա թա-
գաւորեցոյց Հայոց վրսյ 353 թ.:

Բայց Տիրանայ մոլութիւնը յան-

դիմանելու համար նախաւտուեց,
նախարարաց թեւադրութեամբ յարձա-
կումն կրեց լեռնականներից Տարօնոյ
Աշտիշատի եկեղեցւոյ տօնախմբութեան
ժամանակ եւ հազիւ հազ սպանու-
թիւնից ազատուելով հեռացաւ ի Թիլի-
սաւան, եւ 355 թ. վախճանելով թաղ-
ուեց ի Թորդան գիւղ:

Ս. ՅՈՒՍԻԿ

Ս. Վրթանիսին յաջորդեց 356 թ.
իւր Յուսիկ փոքր որդին որ ամուսնացած
էր Տիրան թագաւորի դստեր հետ եւ
ունէր երկու որդի Պապ եւ Աթանագի-
նէ, եւ առանձնացած կպարապէր
ճգնութեամբ, որոյ կաթուղիկոսու-
թեան ժամանակ՝ ուրացողն Յուլիա-
նոս իւր պատկերն ուղարկեց Հայաս-
տան եւ հրամայեց Տիրան թագաւո-
րին կտխել եկեղեցւոյ մէջ, եւ մինչ

180
Տիրան կամէր կախել Երոփաց արքունական եկեղեցւոյ մէջ, Ս. Յուսիկ դիմադրեց եւ ձեռքից յափշտակելով խորտակեց, որոյ վասն Տիրանայ հրամանաւ 362 թ. բրածեծ լինելով ըսպանուեց եւ թաղուեց իւր հայրենի գերզմանոցում ի Թորգան: Սուրբ Յուսիկին յաջորդեց Ծերունի սուրբ Դանիէլ Լուսաւորչի աշակերտ, Գորեպիսկոպոս եւ գլխաւոր եկեղեցեաց Տարօնոյ նահանգի ընդ իշխանութեամբ Ս. Գրիգորի: Եւ ապա փառնեբրէհ Տարօնոյ Աշտիշատ քաղաքից: Սորա կաթողիկոսութեան միջոց Պարսից Նապուհ թագաւորը Յունաց դէմ պատերազմելով յաղթեց Յուլիանոսին եւ բազմաթիւ զօրքով դիմեց ի Հայաստան, խաբկանօք կալանաւորեց զՏիրան եւ իբրեւ դրժող հաշտութեան Պարսից յանդիմանեց հրապարակաւ եւ աչքերը Ապահունեաց դաւառում

հանել տուաւ: Նապուհ որպէս զի իւր այս արած անգթութեամբ Հայերը իւր դէմ չըրգուէ, Տիրանք փոխանակ նորա որդի Արշակը թագաւորեցոյց: ապա դառնալով Պարսկաստան՝ ջանաց դիմադրել հիւսիսային անգագ արշաւանաց:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Փառնեբրէհից յետոյ՝ Հայոց նախարար Ժողովորդեան համաձայնութեամբ դիմելով Արշակ թագաւորին, նորա հաճութեամբ ընտրեցին ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ 364 թ: Յուսիկի թոռն (Աթանազիւեայ եւ Տիրան թագաւորի Բամբիշ քրոջ որդին) որ ուսմամբ զարգացած Կ. Պոլսոյ կամ ըստ ոմանց կեսարեայի մէջ: Արշակ թագաւորի սենեկապետ եւ զինակիրն էր: Մեծն Ներսէս ձեռնադրեցաւ կեսարիոյ Եւսեբի պատրիարքից, եւ

364 Թ. Տարօնայ Աշտիշատի մէջ Ժոզով գումարեց եւ կանոններ սահմանեց այն ամեն անկարգութեանց համար, որք մտած էին ի Հայաստան.

Եհնեց հիւրանոցներ յանցս ճանապարհաց, աղքատանոցներ, հեւանդանոցներ ամեն գաւառաց մէջ՝ քորոտներու, ուրուկներու պատասպարութեան համար, որք մինչեւ այն ժամանակ պիղծ համարուած՝ անապատներու, լեռներու մէջ անտերունջ կլթափառէին.

Նոցա համար հասոյթ նշանակեց գիւղերից եւ քաղաքներից, կարգելով վերակացու իւր իցադասարկաւազ կարներցին, նա եւ շինեց զանազան տեղեր մենաստաններ միանձանց, եւ դպրոցներ, որոց վրայ տեսուչ կարգեց Ս, Գանիէլի աշակերտներից՝ Շաղիտայ, Եփիփան, Եփրեմ

Գինդ Սղկունի եւ այլք, Նոնայեւ կարգեց վանօրէից մէջ՝ Թագաւորաց, իշխանաց եւ զօրավարաց շիրիմներ, որպէս զի ընտանեբար խնամք տանեն նոցա, հաստատեց եղբայրանոցներուն՝ գիւղեր, դաստակերտներ ի մխիթարութիւն նոցա, եւ վերջ դրաւ մուրացկանութեան Հայոց աշխարհի մէջ, այլեւ նորոգեց Խոսրովից եւ Հայոց Թագաւորներից կարգուած իշխանական գահերը, կոչելով Հայկազ Եեանք, Պարթեանք, Արարատեանք, Բագրատոսեանք, Տրպատոսեանք, Ասպետոսեանք, Մախագեանք, Եւջն:

* *
*

ՆԵՐՍԷՍ՝ Ժողովով վերցուց նաեւ հեթանոսական սովորութիւնքը, եւ կանոնական սահմանադրութեամբ արդեւեց մերձաւորաց ամուսնութիւնը, ընդունին եւ մեռելոց վրայ կատարուած

յուսահատական կոծումներ եւ սնո-
տիապաշտ ոճիրները, այցելեց ամեն
գիւղ եւ քաղաք իւր հօտին, սեղանա-
կեց ընդունելով նախարարաց հետ,
օտարների, աղքատների, կաղեր, կոյրեր,
եւէն. որով եւ կոչեցաւ մեծ եւ հայր
հասարակաց:

Մեծն ՆԵՐՍԻՍԻ այս սխրա-
գործութեանց համար Արշակ թագա-
ւոր ժողով գումարեց 366 թ. վա-
զարշապատի մէջ, եւ սահմանեցաւ
Հայոց կաթողիկոսին սուլ՝ պատրի-
արք կոչումն, եւ չառնուէլ այլ եւս
իրենց ձեռնադրութիւնը կեանիոյ ե-
պիսկոպոսից, այլ Հայոց ազգի եպիսկո-
պոսներից Ս. Էջմիածնու՛մ ի վաղար-
շապատ:

Այս միջոց՝ Յունաց Թէոդորոս
սպարապետ, վաղենտիանոս կայսեր
հրամանաւ դիմեց Հայաստանը աւե-

րելու: Մեծն Ներսէս դնաց նորա ա-
ռաջ, հաշտութիւն խօսեց եւ յետ
դարձուց, ապա գնաց ի կ. Պօլիս
առ վաղենտիանոս կայսր. յորմէ
մեծ պատիւ եւ յարգանք վա-
յելելով ազատեց Բուլխանոսի օրով
պատանդ մնացած Արշակի եղբայր
Տրդատը եւ նորա որդի Գնէլը եւ
կայսերական տոհմից կին բերաւ Ար-
շակ թագաւորին Ուիմպիադայ ա-
նուն աղջիկը՝ վաղէս թագաւորի քու-
րը, Շատ տարիներ չանցած Արշա-
կայ հրամանաւ Տիրիթ եւ վարդան
սպանեցին Գնելին: Ս. Ներսէս այս
վարմանց համար անիծեց Արշակին,
Տիրիթին եւ վարդանին, մեկնեցաւ
վաղարշապատից եւ առանձնանալով
վանք ի սուգ նստեց:

Երբ Արշակ շինեց ԱՐՇԱԿԱ-

Ի Ահ, անուն քաղաքը եւ սահմանեց
զայն ապաստանարան յանցաւորաց
քաղմամարդանալու նպատակաւ. ամեն
ոճրագործք այնտեղ ժողովեցան. Նա-
խարարք տեսնելով որ ամեն յանցա-
ւոր եւ ապուտամբ ծառայք այն-
տեղ փախչելով ազատութիւն գը-
տան՝ յարձակեցան եւ աւերեցին քա-
ղաքը, կոտորելով բոլոր բնակիչքը
քացի մանուկներից, որոնց ազատեց
Ներսէս որթով (կողովով) կրելով գո-
մի մէջ, զորս յանձնեց դայեակներու
պատասպարութեան, յորոց առաջացաւ
Սրբունեաց նախարարութիւնը, Յորդո-
րեց նախարարները եւ Հաշտեցոյց
Արշակի հետ, որք երկպառակեալ
միանալով վաղեսի եւ Շապուհի հետ
կկամենային Հայաստանը կործանել,
վերստին ընդառաջեց թէողոս սպա-
րտպետին Արշակայ աղաչանօք, դա-
դարեցոյց ի Հայաստան արշաւանքը.

տուաւ հարկ եւ պատանդ յորդոց
նախարարաց, որոց հետ եւ Պապ որ-
դին Արշակայ, ապա ձեռնադրելով
իւր իշադ սարկաւադ եպիսկոպոս
Բագրեւանդայ եւ Արշարունետց, Հա-
յոց աշխարհի վերակացու թիւնը Նո-
րան յանձնեց եւ երկրորդ անգամ
նախարարաց եւ եպիսկոպոսաց հետ
դիմեց կ. Պօլիս վաղեսի սպառնալիքը
զիջեցնելու, բայց հալածանք կրե-
լով վաղեսից արիոսականաց դրդմամբ,
աքսորեցաւ յանմարդաբնակ թուղիս
կղզի, իւր երկու սարկաւադաց եւ քանի
մի քահանայից հետ, ուր մնաց ինն
ամիս խոտակերութեամբ եւ ձը-
կամբ: 1)

1.) Ինչն Ներսէսի բացակայութե-
անց օգտուելով Արշակ՝ շատ չարեքներ գոր-
ծեց — Նախարարներից շատերին կոտորեց.

Վաղէսի մահից յետոյ 379
թ., ազատուելով արսորանքից արժա-
նացաւ Մեծն Թէոդոսի մեծարանաց,
ներկայացաւ Կ. Պօլսի տիեզերական
ժողովին 381 թ. ուր գումարուած
էին 150 հայրապետք հոգեմարտ Մա-
կեդոնի եւ Ապօղինարի աղանդների
դէմ: Մակեդոն կուրանար Հոգւոյն Սըր-
բոյ աստուածութիւնը, իսկ Ապօղինար
կըարողէր Քրիստոսի մարմինը երկնքից
եկած, եւ Ս. Մարիամից իբրեւ ընդ-
խողովակ անցած:

Այս ժամանակ Արշակ Թադու-
սոր դերի բռնուելով վասակ Մամի-

կամարականաց ցեղը գրեթէ իսպառ ջնջեց,
իսկ զԵսաթ՝ իւր անկարգութիւնը յանդի-
մանելուն համար մերձ ի մահ գանակածեց,
որ հազիւ հազ ազգականաց օգնութեամբ
ազատուեց սպանուելուց:

կոնէի հետ, Շապուհից արսորեցա-
խուժաստանի յԱնյուշ բերդ, ուր ըս-
պանեց զինքն իւր սրով:

Շապուհ տիրեց Հայաստանին
մեծ կոտորածով եւ գերեվարու-
թեամբ, զոր Ներսէս իմանալով
միջնորդեց Թէոդոսին, որը Թագա-
ւորեցոյց Արշակայ որդի Պապ, որ
պատանդ էր ի Կ. Պօլիս, կարգեց
նաեւ Հայոց զօրավար՝ Մամիկոնեան
տոհմից ի տեղի հօր զՄուշեղ որդին
վասակայ, եւ վերադարձաւ Հայաստան
յունական զօրօք Տերենտիանոս ստրա-
տելատի հետ. բանակի մէջ պա-
տերազմեց Շապուհի դէմ Ջիրաւ
դաշտի վրայ, ուր ինքն Նպատ լե-
րան վրայ բազկատարած աղօթելով
Աստուծոյ՝ օգնութիւն կըհայցեր Հա-
յոց, որով յաղթեցան Պարսիկք, Յոնք,

եւ ուրացողն Մեհրուժան 1) հրացեալ
շամիրուբէ պօսկաւ սպանուեց Սըմ-
բատ Բագրատունի սպարապետից՝

Քիչ ժամանակից յետոյ՝ Պապ
Թագաւորը չկարողանալով տանել մե-
ծըն Ներսիսի արդարացի կշտամբա-
նաց եւ խրատուց իւր միլլութեանց հա-
մար, խորհեց սպանանել բայց երկիւղ

1.) Ուրացողն Մեհրուժան խոս-
տումն սասնալով Շապուհից, որ եթէ Հա-
յերը ի պարսկակրօնութիւն գարձնէ,
կըստանայ Հայոց Թագաւորութիւն, դիմեց
Հայաստանի վրայ պարսկական զօրօք,
կոտորած անելով շղթայեց եպիսկոպոսներ
և քահանաները ուզարկեց ի պարսկաս-
տան, և Հայաստանի մէջ գտնուած Յու-
նարէն գրեանք հրոյ ճարակ տալով մի-
անգամայն արգելեց Յունարէն ուսումն,
(զի տակաւին Հայոց Նշանագրեր չկային)։

կրելով Թէոդոս կայսրից եւ ժողովրդից,
գաղտնի՝ մահադերձով Թունաւորեց
384 թ. Եկեղեաց գաւառի Խախ
գիւղում։ որ եւ Թաղեցաւ ի Թիւն ա-
ւան։

Մեծն Ներսիսին յաջորդեցին՝
Շահակ Մանազկերտցի, որ Հայոց ե-
պիսկոպոսներից կաթողիկոս ձեռնա-
դրուեց, ըստ որոշման երկրորդ ժո-
ղովոյն վաղարշապատի 366 թ. Չա-
ւէն եւ Ասպուրսկէս, ազգականք Շա-
հակայ, որոյ ժամանակ Հայոց Թագա-
ւորութիւնը երկուքի բաժանուած էր,
եւ կիշխէին Պապայ երկու որդիք—Ար-
շակ եւ Վաղարշակ, մին յերեզայ
Յունական բաժնին Հայոց, իսկ միւսն
ի Դուին պարսկական բաժնին։

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Ասպուրակէսի մահից յետոյ, Հա-
յոց Խոսրով Գ. Թագաւորի եւ ազ-

գի հաւանութեամբ 390 թ. ընտրուեց Սահակ պարթեւ, մեծն Ներսիսի որդին, սուրբ լուսաւորչի տոհմի վերջին շառաւիղը. որ Կ. Պօլսոյ մէջ հելլենական դպրութեամբ վարժուած, եւ իւր հօր համանման, առաքիւնի եւ Հայր հայրենաց հանդիսացած էր, կընող մահից յետոյ իւր 60 աշակերտաց հետ խտտակրօն կեանք կվարէր:

Ս. Սահակ մի քանի նախարարաց քսութեամբ ամբաստանեցաւ պարսից դուռը Խոսրովի հետ, հայրապետութիւնից դարձարեց, Խոսրով Արշակունին բանդարկեցաւ յԱյրուշ բերդ Պարսից Շապուհի հրամանաւ, եւ տեղը թագաւոր դրուեցաւ նորա եղբայր Վասնշապուհ: Շապուհի մահից յետոյ իւր Արտաշէր որդին թոյլ տուաւ Ս. Սահակին կրկին շարունակել իւր Հայրապետական պաշտօնը:

Ս. Սահակ անմիջապէս ձեռ-

նարկեց Շապուհի օրով ուրացեալ Մեհրութանի եւ Վահան Մամիկոնէի քանդած սուրբ Հռիփսիմեանց տաճարը նորոգել, եւ սուրբ Հռիփսիմէի մասանց սուրբ լուսաւորչի խաչանիշ կնքով կընքեալ տապանը ջբացած ինքն եւս կընքեց եւ ամիսից իւր տեղը, եւ տօն հաստատեց (395 թ.) եւ ապա Արտաշրի մօտ գնալով, Կամսարական եւ Անատոռնի նախարարութեանց պատիւը վերահաստատեց: Մամիկոնեանցեղը նախարարութեան հինգերորդ կարգը բարձրացոյց, իւր Սահականոյշ դստեր ամուսին Համազասպ Մամիկոնեան՝ սպարապետութեան հասոյց, եւ Արտաշրի հրովարտակաւ վերադարձաւ ի Հայաստան:

* *

Այս միջոց մեծն Ներսիսի աշակերտ՝ Տարօնոյ Յացեկաց, այն է, Լա-

ցիկ գիւղի վարդան անուն մի առա-
քինի մարդոյ որդի սուրբ Մեսրոպը,
Ասորի, Հելլէն եւ Պարսիկ դպրու-
թեամբ զարդացեալ եւ հմուտ աշխար-
հական կարգին եւ զինսւորական ար-
հեստին, որ Ներսիսի Նօտարն էր եւ
ապա Հայոց արքունի Գիւանադպիր,
Թողած այս պաշտօնը, առանձնացած
կապրէր Գաղթան գաւառի մէջ, ուր
վերստին ծագած կռապաշտութիւնը
ընջեց Շաբաթ անուն իշխանի օգնու-
թեամբ:

Որովհետեւ քարոզելու ժամանակ
ներդուծիւն կկրէր, դիմեց Ս. Սահակին,
յայտնեց իւր դիտաւորութիւնը հոյ-
կական տառեր հնարելու. նորա հրա-
մանաւ դիմեց զանազան քաղաքներ՝
գիտնական Գանիէլ եպիսկոպոսին Մի-
ջագետաց, Եղեսիոյ հեթանոս Պղատոնի
և ի Սամուսատ հռչակաւոր Հռոփանոսի
մօտ՝ Հայոց նշանադրերը հնարելու:

Բայց երկար ժամանակ դեգերելուց եւ
անօգուտ մնալուց յետոյ, աղօթիւք դի-
մեց առ Աստուած, եւ ձեռք բերաւ
իւր ցանկացածը Սամուսատ քաղաքի
մէջ, Հոգւոյն սրբոյ շնորհօք Հայերէն
տառերը դրոշմեցան նորա սրտի վրայ՝
պէս պէս ձեւակերպութեամբ, որ իս-
կոյն դառնալով սուրբ Սահակի մօտ,
նորա եւ ուսումնասէր վճարմշապուհ
թագաւորի օգնութեամբ բացուեցան
(407 թ.) վարժարանք Հայերէն դըպ-
րութեան տարածման:

* * *

Ս. Մեսրոպը, Ս. Սահակի հաւա-
նութեամբ վերադարձաւ Գողթնեաց
գաւառ՝ իւր քարոզութիւնը շարունա-
կելու, ուր Շաբաթ իշխանի եւ Գիտ
որդւոյ օժանդակութեամբ շատ գա-
ւառներում վանականներ կարգեց,
զնաց Սիւնիք, Վաղինակ իշխանի օգ-

նութեամբ Սիւնեաց եպիսկոպոս կարգեց ոմն Անանիա Սիւնեցի, եւ իւր աջակից գտաւ ուսման գործը յառաջ տանելու նաեւ վասակ Սիւնին, որ նոր էր անցած իշխանութեան գլուխ:

Ս. Մեսրոպ գնաց վրաստուն հնարեց նոցա սառներ, նոցա Բակոչր թագաւորի եւ Մովսէս եպիսկոպոսի օգնութեամբ բացաւ դպրոցներ, վերակացու կարգելով իւր աշակերտ Խորենացի Տիրայր եւ Տարօնեցի Մոչիէ, Անցաւ յԱղուանս, ծանօթացաւ նոցա հնչմանց, հնարեց Աղուանից նշանագրեր և Ասուաղէն թագաւորի եւ Երեմեա եպիսկոպոսապետի օգնութեամբ բացաւ ուսումնարաններ, զորս յանձնեց իւր Ենուք, Դանան եւ Յովնաթան աշակերտաց, ապա դարձաւ սու սուրբ Սահակ ի Հայաստան. որ կպարապէր Ասորէրենից ի Հայ թարգմանութեամբ:

զի Յունարէն գրքեր այրուած էին ուրացեալ Մեհրուժան Արծրունու ձեռօք:

* * *

Երբ վրամշապուհ մեռաւ (413 թ.) Ս. Սահակ գնալով պարսից դուռը ազատեց զսոսրով կալանաւորութիւնից, եւ կրկին թագաւորեցոյց, որ մի տարուց յետոյ մեռաւ, եւ Յագկերտ իւր Շապուռն որդին Հայոց թագաւոր կարգեց, որի ձեռօք Հայ նախարարք ընտելացան պարսից ազանդին եւ սովորութեանց, եւ միացան զուարճութեամբ՝ եւ խնամութեան կապով կապեցան պարսից հետ, անուշադիր լինելով Ս. Հայրապետի խրատուց եւ յորդորանաց, իսկ երբ թագաւորեց վասմ Յագկերտ առաջնոյ որդին, հալածեց քրիստոնէութիւնը, յորմէ Ս. Սահակ փախչելով անցաւ Յունաց բաժին (420 թ.): Սակայն

ՅոՒնաց ատելութիւնը եւս արդեւք ե-
ղաւ նորա հայրենասիրական սուրբ
նպատակին, որոյ վասն Ս. Սահակ ա-
ղաչանաց թղթով ուղարկեց ի Կ.
Պօլիս թէոզոս կայսեր եւ Ատտիկոս
պատրիարքի մօտ Ս. Մեսրովք եւ իւր
թոռն վարդան Մամիկոնեան, որք
մեծ պատուով ընդունուեցան: Մես-
րովք ստացաւ Ակումիտ անուն (Գեր-
զզոն վարդապետ): իսկ վարդան ար-
ժանացաւ Ստրատելութեան աստի-
ճանին, եւ վերադառնալով ի Հայաս-
տան՝ բացին դպրոցներ ՅոՒնաց բաժ-
նի մէջ:

* *

Ս. Սահակ Պարսից բաժնի Հայ
նոխարարաց հրաւիրանօք՝ ՅոՒնաց
բաժնի դպրոցները յանձնելով սուրբ
Մեսրովքին եւ իւր Հմայեակ եւ Հա-
մազասպեան թոռներին, եկաւ վա-

ղարշապատ, եւ նախարարաց հաճու-
թեամբ ուղարկեց իւր թոռն վար-
դանին եւ Սմբատ ասպետին վաւարի
մօտ, եւ թագաւորեցոյց Հայաստանի
վրայ՝ վաւարապուհոյ տասն եւ ութ
ամեայ Արտաշէս կամ Արտաշիւր որդին:

Ս. Մեսրովքայ աշակերտք 1)
Կ. Պօլսում աւարտելով իրենց ուսումն
վերադարձան ի Հայաստան, հետերնին
բերելով մի ընտիր օրինակ աստուա-

1) Աշակերտք արբոյն էին՝ Յովսէփ
Պաղնացի, Եղիկ Կողբացի, Դաւիթ ան-
յաղթ, Յոհան Եկեղեցացի, Աբձառն Արժ-
րունի: Ղեւնդ Երեց մեծ. Նքանչեւին Կոր-
իւն և Մամբրէ վերծանող՝ եղբայր Խորե-
նացոյ, Սքա Ի Կ. Պօլիս հաւաքուելով իմի-
ասին սկսան թարգմանել շատ գրքեր, եւ թն
տարի թարգմանութեամբ պարապելով որք
սուրբ Մեսրովքայ խնդրանօք արքունի գը-

Ծառունչ սուրբ գիրք ըստ Թարգմանութեան հօթանասնից, զոր Ս. Սահակի եւ Մեսրոպի իրանց աշակերտաց օգնութեամբ կրկին Թարգմանեցին ի Հայ լեզու:

Ս. Սահակ (426 թ.) Ժողով գումարեց Վաղարշապատի մէջ, սահմանեց քսան եւ երեք կանոն եկեղեցւոյ բարեկարգութեան համար: Եւ հաւանութեամբ եպիսկոպոսաց գրեց ընդհանրական թղթեր նոյն կանոնները ճշտիւ գործադրելու. միանգամայն լինելով սկզբնաւորիչ շարականի եւ ութ ձայնից: Ս. Մեսրոպի ուսման գործը՝ Յունաց բաժնում իւր Ղեւոնդ եւ Դան աշակերտաց յանձ-

րատան մէջ՝ Մարտիրոսն ապարիարբի ձեռօք գտան հին և նոր կտակարանաց անվրէպ օրինակը ի Յոյն լեզու: զոր և բերին ի Հայ առ Ս. Սահակ և Մեսրոպի:

նելով եկաւ յԱյրարատ, անցաւ ի Բաղասական աշխարհ, վերցուց հեթանոսական աղանդը (արեւորդիք) եւ վերադարձաւ առ Ս. Սահակ:

Բայց շատ ժամանակ չանցած՝ կրկին խռովութիւն ծագեց նախարարաց մէջ մոլի Արտաշրի դէմ, որոնք կջանային Ս. Սահակին եւս մասնակից առնել Հայաստանին վտանգ ըսպառնացող՝ իրենց խորհրդին, չարախօսիլ առ Թագաւորն Պարսից եւ դահրնկեց առնել զԱրտաշիր, բայց հայրին թագին պաշտպան Հայրապետը յիշելով պարսից գազանաբարոյութիւնը, մերժեց իսպառ նախարարաց դաւադիր խորհուրդը, ասելով. «ես չեմ կարող իմ արտացեալ ոչխարը առողջ գազանի նետ փոխել, որոյ առողջութեանը մեզ պատռնաս ե»: Եւ

Նախարարը փոխանակ զգաս-

տանալու՝ լսելով Ս. Սահակայ Հայրա-
կան խրատները, միաբանեցան՝ թա-
գաւորութեան հետ հայրապետու-
թիւնն եւս գահավիժել. Սուրմակ ե-
րեցի հետ պարսից դուռը գնալով
ամբաստանեցին թագաւորը, եւ հայ-
րապետը, եւ (423 թ.) գահընկէց
արին. թագաւորի տեղ ընդունելով
Վեհմիհըշապուհս պարսիկ մարզպանը
իսկ Ս. Սահակի տեղ Սուրմակ երեց,
Բզնունեաց գաւառի Արծկէ քաղա-
քեց:

Սուրմակ շուտով մերժեցաւ
իւր անկարգ վարուց համար, եւ յա-
ջորդեց Բրքիոյ ասորին, որոյ շահամու-
տութեան համար, նախարարաց մէջ
գժտութիւն ծագեց եւ դիմեցին Վը-
ռամին, որպէս զի կամ վերստին զՍ.
Սահակ հաստատէ, եւ կամ զայլ ոք

վոխանակ Բրքիշոյի Վռամ երկու-
կուսակցաց առաջորդութիւնը եւս կա-
տարեց, հաստատելով զՍահակ իւր
պաշտօնի մէջ ընդ իշխանութեամբ
ասորի Շմուէլի:

Ս. Սահակ, Արշակունի թագա-
ւորութեան բարձման եւ հայրապե-
տութեան աղետից վրայ դառնացած
սրտով, սքանչելի կերպով ատենաբա-
նեց Վռամի եւ մոգաց առաջ, եւ պա-
հանջեց պարսիկ մարզպանութեան
բարձումը. Վռամ զմայլեցաւ եւ հը-
րամայեց արծաթ տալ Հայրապետին,
բայց նա մերժեց եւ դարձաւ ի Հայ-
աստան:

Երբ հակաթու մոլի եւ ա-
գահ Շմուէլ տաղտկալի դարձած Ժո-
ղովորեան մեռաւ, նախարարը (439
թ.) կրկին խնդրեցին Ս. Սահակին ընդ-
հանուր հայրապետութեան պաշտօն

վարել, որ յանձն չառաւ եւ քիչ ժամանակից վախճանեցաւ ի Բլուր գիւղ Բագրեւանդայ, յիսուն և մի տարի հայրապետական իշխանութիւն վարելուց յետոյ, եւ թաղեցաւ Տարօնայ Աշտիշատ ականում: Վարդանայ կին՝ Դստրիկի, Երեմեա սարկաւազապետի եւ այլ աշակերտաց ձեռօք:

* *

Ս. Սահակին տեղակալեց (440 թ.) Ս. Մեսրոպը, վեց ամսոյ չսփ. որ մեռաւ Վաղարշապատի մէջ, եւ Վահան Ամատունի նախարարի ձեռօք տարուելով յՈշական գիւղ թաղուեց:

Ս. Սահակի Հայրապետութեան ժամանակ Կ. Պօլսոյ մէջ ծագեցաւ հետտորական աղանդը, ընդ դէմ՝ Քրիստոսի Աստուածութեան եւ Աստուածամայրութեան Մարիամու, որոյ համար ժողով գումարեցաւ (431 թ.)

Եփեսոս քաղաքի մէջ, փոքր Թեոդոսկայսեր առաջարկութեամբ. ուր ներկայ եղան 200 հայրապետք, մերժեցին նեստորական մալրութիւնը՝ ընդ դէմ՝ անձնաւորութեան եւ որդիութեան Քրիստոսի, եւ սահմանեցին ուղիղ վարդապետութեան կանոնադրութիւն, զորս ստացան Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ իրենց աշակերտաց ձեռօք, որոնք ներկայ էին ժողովին, եւ ազգային ժողով կազմելով Աշտիշատ քաղաքի մէջ՝ ընդունեցին Եփեսոսի ժողովի կանոնները, եւ դատապարտեցին զնեստոր եւ նորա համախոհները, որք կրկամենային մութանել ի Հայս նեստորի աղանդը, եւ Թեոդորոսի Մոպուեստացւոյ եւ Դէոդորի Տարսնացւոյ աղանդաւոր գրքերը:

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Ս. Սահակին յաջորդեց իւր եւ Մեսրոպի աշակերտ Վայոց Չորոյ Հոգացիմ գիւղի Յովսէփ 1) քահանայն (441 թ.) որ Սուրմալի մահից յետոյ ժողով գումարեց (447 թ.) Շահապիւլանի մէջ ի գաւառին Բագրեւանդայ, յորում սահմանեցաւ քսան կանոնք տուգանաց մերձաւոր խնամակերան: Սորա ժամանակ (450 թ.) բորբոքեցաւ Յազկերտ երկրորդի զայրոյթը քրիստոնէութեան դէմ, դրդմամբ մագաց եւ Միհրներսէհ հազարապետի, բացարձակապէս հրամայեց 'չայոց' Վրաց եւ

1) Ըստ ոմանց թէ և Յովսէփ կաթողիկոսական աթոռը կալաւ, բայց Սուրմակ կվարէր կաթողիկոսական պա -

Սղուանից: Թողուլ քրիստոնէութիւնը եւ ընդունել մոգական աղանդը եւ երկրպագել արեգական, ուղարկեց մի նամակ, յորում կըջատագովէր մոգական աղանդ եւ կծաղըէր քրիստոնէութիւնը, եւ ընդնմին կհրամայէր կամ մի առ մի պատասխանել նամակին, եւ կամ գալ ի դուռն արքունի:

Յովսէփ կաթողիկոս ժողով գումարեց Արտաշատ քաղաքի մէջ եւ մի զօրաւոր պատասխան գրեց խայտառակելով մոգական աղանդը եւ գովելով քրիստոնէութիւնը, եւ միանգամայն ցոյց տալով իրենց հաստա-

տօնը, որ յետ վեց ամաց՝ Յովսէփ ընդունելով օծումն սկսեց վարել իւր պաշտօնը, զի ի հնումն Հայոց հայրապետք յետ օծման կըվարէին կաթողիկոսական իշխանութիւնը:

տամտութիւնը՝ ասելով, ոչ երկինք
երկնաշորք, եւ ոչ երկիր երկրաշորք
կարեն խախտել զմեզ, առ թէ քո եւ պ...
րանոց մեր. որոյ վերայ զարմացաւ Յազ-
կերտ իւր նախարարներով, եւ անմի-
ջապէս կոչեց Հայոց նախարարք ի դու-
ռն, որք անճարացեալ առ երսս երկըր-
պագեցին արեգական եւ արձակեցան
եօթն հարիւր մոզերով ի Հայաստան,
կրակապաշտութիւնը մտցնել Հայաս-
տանի մէջ, փոխանակ եկեղեցւոյ կա-
ռուցանել կրակատուններ եւ մեհան-
ներ, որուն ծածուկ եւ յայտնի կա-
ջակցէր հաւատուրացն վասակ Սիւնի,
փառամու մարդպանը, Հայաստանի
վրայ թագաւորելու նպատակաւ, ո-
րով Յազկերտից աւելի վնասեց Հայ-
աստան աշխարհին եւ եկեղեցւոյն՝ իւր
գործակից թուլասիրտ նախարարնե-
րով եւ ուրացեալ Զանգակ եւ Պետրոս
երէցններով, սակայն Ս. Յովսէփի խոր-

հրդուվ եւ Ղեւոնդ երիցու քաջու-
թեամբ կոտորեցան մոզերը, վասակ
ձերբակալեցաւ, որ առ երեսս զըջաց
եւ քրիստոնէական սիրոյ ներողամը-
տութեան արժանանալով արձակեցաւ:

Յտղկերտ լսելով այս ամենը՝
մեծ պատրաստութեամբ յարձակեցաւ
Հայաստանի վրայ (451 թ.) բայց Յով-
սէփ կաթողիկոսի, Ղեւոնդ երիցու
եւ Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսի
աջակցութեամբ Մամիկոնեան վար-
դան սպարապետի ձեռք գումարեցան
60,000 կամաւոր զինուորք եկեղե-
ցին պաշտպանելու, եւ դիմակալեցին
Մուշկան Նիւսալաւուրտ զօրապետին,
Ասարայրի դաշտի վրայ՝ Տղմուտ գետի
ափ, ուր երկու կողմից արիաքար պա-
տերազմեցան միմեանց հետ, քաջ
զօրավարն վարդան 1) յափշտակուած

1) Վարդանի նահատակութիւնից

եւ արիացած Եկեղեցւոյ եւ հայրենեաց սիրով առիւծ անման յարձակեցաւ եւ կոտորեց Պարսից բանակը, ուր եւ նահատակեցաւ ինքն ԻՅՅ6 հոգւով, երկու կողմն եւս յաղթեցան եւ վերջացաւ պատերազմն:

Յազկերտ ցաւելով իւր զօրաց կոտորածի եւ Հայաստանի աւերման վրայ, սաստիկ պատուհասեց զուրացեալն վասակ, եւ բանդարկեց Հայ նախարարաց հետ զՍ. Յովսէփ, Ղեւոնդերեց, Սահակ եպիսկոպոս եւ գործակիցք նոցա, որոնք դիմադրած էին Յազկերտին, եւ պատճառ եղած պարսից ինն մեծամեծ նախարարաց եւ 3544 զօրաց կոտորման: Ապա դիմելով Բու-

խտոյ՝ Հայոց աշխարհը մնաց անիշխան ասան տարի, և խառնութիւնք և շալ-
ծանք շարունակեցան:

շանաց վրայ՝ իւր հետ կալանաւորեաւ տարաւ նա եւ Հայ նախարարք եւ Ս. Ղեւոնդեան քահանայք, եւ բանտարկեց Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաքի բերդի մէջ. եւ հրամայեց Մոգպետին՝ դառն տանջանօք, եւ ազգի ազգի ողորանօք զնոսա ի մոգութիւն դարձնել:

Մոգպետն ամեն տանջանք, եւ տառապանք եւ ողորանք ի գործ դրաւ խախտել նոցա հաւատը, քահանայք եւ նախարարք միմեանցից դատելով՝ առանձին առանձին՝ դէժ եւ տարտարօսական բանտից մատնեց, բայց դարձեալ չհասաւ իւր անօրէն նպատակին, եւ ի վերջոյ ինքն եւս Աստուածային հրաշից ազդմամբ դարձաւ քրիստոնեայ, զոր լսելով Յազկերտ՝ անհնարին դառնութեամբ լցուեց եւ ուղարկեց զԳեորգիոս հա-

մոզել զՄոզպետ եւ զկալանաւորս,
որ թողուն քրիստոնէութիւնը եւ ըն-
դունեն մոզութիւնը:

* * *

Դենշապուհ տեսնելով նոցա
հաւատոյ պնդութիւնը՝ ըստ հրամանի
Յազկերտի ուղարկեց զմոզպետ ի խո-
ժաստան, ուր եւ մի գուբի մէջ ձգել
տալով նահատակեց, եւ Ղեւոնդեանք
— Յովսէփ կաթողիկոս, Սահակ ե-
պիսկոպոս, Ղեւոնդ երէց, Մուշէ՝
Արսէն քահանայք եւ Քաջալ սար-
կաւադ՝ համարձակ խայտառակելով
մոզական օրէնքը եւ Յազկերտի անի-
րաւութիւնը, նահատակեցան սոսկալի
տանջանքներով անապատի մէջ բացըն-
կեցիկ լինելով, որոց մարմինները քը-
րիստոնեայք գաղտնի ամփոփեցին ա-
ռանձին առանձին:

Ղեւոնդեանց աշակերտներից

երկուք՝ սրբակեաց խորէն եւ Աբրա-
համ, զանազան տանջանքներ կրելուց
զինի՝ աքսորեցան ի խոժաստան, ուր
տեղւոյն քրիստոնեաներից ողորմու-
թիւն հաւաքելով կուղարկէին բան-
տարկեալ Հայ նախարարաց ի հիւշա-
պուհ քաղաք, այս կամաւոր սպասա-
ւորութեան ժամանակ, խորէն խոր-
շակահար լինելով վախճանեցաւ խո-
ժաստանի մէջ, իսկ Աբրահամ խընդ-
րանօր նախարարաց եւ Ստրեստանի
քրիստոնէից երաշխաւորութեամբ՝ վե-
րադարձաւ ի Հայաստան, ձեռնադրե-
ցաւ եպիսկոպոս եւ վախճանեցաւ:

Ս. Յովսէփի կալանաւորութեան
ժամանակ, նորա կանխաձեռնութեամբ,
ընտրեցաւ Մելիտէ եպիսկոպոս, որի ժա-
մանակ հայրապետական պիտուք (452
թ.) փոխադրեցաւ ի Դուխն, եւ ապա
Մովսէս Կանազկերտցի (457 թ.):

Սորա ժամանակ Հայ Նախարարը ար-
ձակուելով պարսկաստանի բանտից
վերադարձան ի Հայաստան իրենց
պատուով:

ԳԻԼՏ ԿԱԹՈՒՆԻՆԻՍ

Մովսէսի մահից յետոյ (471 թ.)
ընտրուեց Գիւտ՝ աշակերտ Ս. Սահա-
կայ եւ Մեսրոպբայ՝ քաջավարժն ի
Հայ եւ ի Հելլենական դպրութիւնս:

Գիւտի կաթողիկոսութեան ժա-
մանակ դարձեալ շարունակեցաւ պար-
սից հալածանքը Հայոց դէմ, մոգական
աղանդը Հայաստան մտցնելու նպա-
տակաւ: Բայց Գիւտի եւ ուխտապահ
նախարարաց աջակցութեամբ փակուե-
ցան կրակատունք: Ուրացեալ Գաղի-
շոյ Խոնխոռունի ամբաստանութեամբ
Պարսից դուռը կոչուեց ծերունի եւ

առաքինի հայրապետը (472 թ.) ուր
մեծ յարգանք գտաւ Խոնխոռունի
քրիստոնեաներից:

Պերոզի հրամանաւ մատնե-
ցաւ հարցափորձի Ստեփնն եւ իւր
անվեհեր պատասխաններով զարմա-
ցոյց ամենուն: Բայց ի վերջոյ առա-
ջարկեցաւ կամ կաթողիկոսութիւնից
հրաժարիլ եւ կամ ընդունել մոգական
աղանդը: Գիւտ՝ կաթողիկոսութիւնից
հրաժարեցաւ, բայց ծածուկ եպիսկո-
պոսներ եւ քահանաներ ձեռնադրեց
Պարսկաստանի քրիստոնէից համար,
զարդարեց եկեղեցւոյ պաշտամունքը
քարոզներով եւ իմաստալից ազօթը-
ներով:

Գարձաւ ի Հայաստան, եւ ան-
ձանձրոյթ շարունակեց ժողովրդոց
հոգեւոր սկստոյքը հոգալ: Պերոզի հը-
րամանաւ սորա տեղ ընտրուեց Գրիս-

տալիոր Արծրունին (475 թ․) որոյ կաթուղիկոսութեան երկրորդ տարին վախճանեցաւ Գիւտ:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԻԿՆՈՒՆԻ

Գրիստափորին յաջորդեց Յոհան Մանդակունի, աշակերտ սրբոց թարգմանչաց (480 թ): Յովհան Մանդակունւոյ կաթուղիկոսութեան ժամանակ, Պարսիկք յաղթեցան Հոն — Նեփթալներից, եւ վասկթանգ սպանելով վրաց ուրացեալ վազգէն (փեսայ վարդանայ) թագաւորը, ինքն թագաւորեց եւ ապստամբեցաւ Պարսից դէմ:

Մանդակունւոյ խրատով միացան նախարարք եւ վահան Մամիկոնեան, որ իւր մանկութեան միջոց վասակ Մարզպանի ձեռօք ուղարկուած էր Պարսից դուռը, եւ իւր հօրաքրոջ Զուլիկի(ամուսին վրաց Աշուշայ իշխանի)

ձեռօք աղատուած, եւ կրկին Գագիշոյ Մախխաղէի ամբաստանութեամբ Պարսից դուռը դնալով առ երեսս ուրացած, պատուով դարձած էր ի Հայաստան, երգուեցան աւետարանի վրայ եւ դիմադրեցին պարսկական խրոխտութի դէմ: մեծ կոտորած հասցրին պարսից. եւ հալածեցին Հայաստանից Ատրվշնասպ Պարսիկ մարզպան եւ վեհնամ հաղարապետը, գրաւեցին Դուին մարզպանական քաղաք, վահան կտրեցաւ Սպարապետ, եւ Սահակ Բագրատունի՝ Մարզպան:

* * *

Կրկին պատրաստեցան Ատրվշնասպի դէմ, որ դարձած էր Ատրպատականից մեծ բազմութեամբ, Երասխ գետի ափ բանակ կազմած համբուրելով սուրբ Աւետարան եւ ծերունի Հայրապետի աջը՝ յարձակեցան պար-

սից դէմ հւ մեծ կատորած արին, ըս-
պանելով Ատրվշնասպ եւ շատ զօրա-
պետներ, դարձան՝ Բուկայ եկեղեցւոյ
մէջ գոհութիւն մատուցին Աստուծոյ,
ուր Յոհան Մանդակունին գեղեցիկ
Ատենաբանութեամբ խօսեց Աստուա-
ծային սքանչելեաց վրայ, յորդորեց
հանդիսականները ի սէր առ Աստուած
եւ առ ընկերս, օրհնելով իշխանները
եւ բոլոր աղօր:

* *
*

Ապա երրորդ անգամ պատրաս-
տեցան հայերը պարսկական բանակի
դէմ, որ հկած էր Հեր եւ Չարեւանդ-
գաւառներ, իրենց հետ առին նաեւ
ծերրունի հայրապետը, բանակեցան Ար-
տազ գաւառի Նեսիպատ գիւղի մօտ ուր
կրկին համբուրելով խաչ եւ Աւետարան՝
Հայրապետի աջը, առին նորա օրհնու-
թիւնը, յարձակեցան պարսից բանակի

վրայ եւ ցրուեցին, ուր վահանայ վարդ-
եղբայր պատանդութեան կալանաւո-
րութենից փախած, յանկարծ Հայոց
բանակի մէջ երեւեցաւ, եւ յաղթա-
կան ուրախութիւնը կատարեալ եղաւ,
իսկ այստեղ ծերրունի Հայրապետը ար-
տասանեց այս սրտառուջ նշանաւոր
խօսքը «ոյ այնչափ ոչրախեմ յաղոր-
բեան վրայ, որչափ նորա վրայ, որ
Աստուած հաշտ է մեզ հետ»:

* *
*

Չորրորդ անգամ դիմեցին օգնել
վրաց վախճանդ թագաւորին, պա-
տերազմեցան Միհրան պարսիկ զօրա-
վարի դէմ՝ Կոչր գետի դաշտավայրի
վրայ, ուր Սահակ մարզպտն եւ վա-
հանայ վասակ հղբայրը նահատակե-
ցան, Բաբելէն սաստիկ վիրաւորեցաւ,
Հրահատ կամսարտկան եւ Յաղբ սիւ-
նի Սեպուհը կալանաւորուեցան եւ

արձակեցան, Այս պատերազմե-
ցան Դուռնոյ մօտ Զառ միհր հազա-
րաւուխտ պարսիկ զօրավարի դէմ, որ
դիմաժ էր ի Հայաստան ահագին բա-
նակաւ, սասանեցողցին պարսկական
զօրախումբը միաձայն կոչելով «Հար-
ցոչ գրչնամիս հաւատոյ, եւ մեռցոչը
աստ ի պարծաւս եկեղեցոյ»:

Այս պատերազմի մէջ ծերունի
հայրապետը վիրաւորեցաւ դիականց
մէջ մնալով եւ ապա զերծաւ, բայց
Հազարաւուխտ յուսահատ եւ ամօթա-
հար դարձաւ Պերոզի հրամանաւ ի
վրաստուն, թողլով իւր տեղ մարզպան
զՇապուհ:

Հայք Մանդակունւոյ առաջ-
նորդութեամբ պատերազմեցան եւս
Շապուհ մարզպանի դէմ, յաղթեցին
եւ դառնալով էջմիածին գոհութիւն
մատուցին Աստուծոյ, ուր պատարա՞

զեց Մանդակունին, սկսան նորագել
էջմիածնայ տաճարը ինամակալու-
թեամբ վահանայ եւ Մանդակունի
կաթուղիկոսի:

Այս միջոցին Պերոզ մեռաւ,
վաղարշ թագաւորեց պարսից, եւ
Ներսոր առաքեցաւ Մարզպան ի
Հայաստան, որոյ ձեռօք՝ Մամիկոնեան
վահան ազգի հաւանութեամբ հաշ-
տութեան դաշինք առաջարկեց վա-
ղարշին այս բովանդակութեամբ.

Նախ՝ քրիստոնէութեան օրհնքը ազատ
բողոք: ուրաջութեան հս մար ցահ եւ
պատիւ յտաչ, եւ կրակարաներ չլինել
Հայաստանի մեջ:

Երկրորդ՝ Հայոց ազնուականները
ազատ բողոք ըստ հայրենի սովորութեան,
ազգութայցեր, սեւառակներ չպատուել:


Երրորդ՝ Բառներին չլսել եւ չբա-
տել զոք, այլ արքունական ատենի մե-

ամեն գործ եւ գործող զնենչ եւ ապա
դատել:

Վաղարշ ընդունեց այս դաշինք,
եւ վերջացաւ պարսկական հալածանք,
վահան՝ Վաղարշ Թագաւորից կար-
գեցաւ Հայոց սպարապետ, եւ ապա
Մարզպան: Ծերունի հայրապետը Ս.
Էջմիածնայ եւ Գոռնոյ մէջ գոհացո-
ղական մողթանք մատուցց Ստուծոյ,
եւ ապա վահանայ հետ կռատունի-
րը կործանեց, խախտուած վանքերը
եւ տաճարները նորոգեց վերակացու-
թեամբ գիտնական Ղազար վարդա-
պետի Փարպեցւոյ՝ աշակերտի սրբոց
Թարգմանչաց, գեղնցիկ երգերով եւ
մողթանքներով պաշտաւացոյց եկեղեց-
ւոյ ժամերգութիւնը, ճոխացոյց Մաշ-
տոց գիրքը եւ վախճանեցաւ խորին ծե-
րութեան մէջ: 1)

1) Այս միջոց կենդանի էին Մովսէս

215 113
Խորենացի, որ ձեռնադրուած զիւտ կա-
թողիկոսից առաջնորդ կարգուած էր Բագ-
րեւանդայ, եւ սուրբն Եղիշէ և այլք, որք
երկիրը վրդովման մէջ տեսնալով հեռա-
ցած ժողովրդից, կառանձնանային վան-
քերում. և անապատներում, կգորապէին
հոգևոր կրթութեանց, շարագրութեամբ
գրոց, և Թարգմանութեամբ օգտակար և
հոգելից մատենից:





5423

2013

« Ազգային գրադարան



NL0032227

